ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2021թ. № 258

ՀՐԱՆՈՒՇ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 62-րդ կետով, հաշվի առնելով, որ Հովհաննես Մելիքի Մաթոսյանի մահից հետո Պանրագործների թաղամասում գտնվող անշարժ գույքն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 14-ի վկայագրի փոխանցվել է Հրանուշ Հովհաննեսի Մաթոսյանին, սակայն անշարժ գույքի հասցեն սխալ է գրվել, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 14-ի վկայագիրը և Հրանուշ Հովհաննեսի Մաթոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հրանուշ Հովհաննեսի Մաթոսյանին ժառանգաբար փոխանցված Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 0,422 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի, դրա վրա գտնվող 67,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 85,0 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի և 33,0 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի «քաղաք Սպիտակ, Առափնյա թաղամաս» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 248» հասցեով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հունիսի 23
ք.Սպիտակ